Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 50

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2010թ. մարտի 12-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության
նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Վարդան Արամյանը	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստին հրավիրված էին.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Շուշանիկ Հովսեփյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 15-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/Հատկացման հայտ և Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ/ Աշխատանքային պլան,
   դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շրջանակներում կնքված «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում ՋՕԸ-երի և ՋՄԳ-ների համար ԱՏՀ (GIS) ծրագրի գնման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
4. Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի փակման ուղեցույցի քննարկում և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետագա քայլերի նախանշում:
5. Այլ հարցեր՝

   ա/«Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնում (Փաթեթ II)» IA/CB/CW-08/010 պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

   բ/«Ենթակառուցվածք բաղադրիչի տեխնիկական աուդիտոր» IAP/IC-08 ծառայությունների մատուցման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

   գ/ Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շահառուների խորհրդի գործող կազմի լուծարման, շահառուների խորհրդի կանոնակարգի կասեցման և նոր ընտրությունների անցկացման մասին տեղեկատվության ներկայացում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 15-րդ հատկացման հայտով ՀՄՀ-Հայաստանն ակնկալում է ՀՄԿ-ից ստանալ 18,966,425 ԱՄՆ դոլար, որից 18,276,992 ԱՄՆ դոլարը, ուղղվելու է Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ֆինանսավորմանը:

Կատարման նախապայմանների վերաբերյալ Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՋՕԸ-երի ինքնածախսածածկմանը վերաբերող նախապայմանը բավարարված է, քանի որ, ըստ տվյալ նախապայմանի վերանայված ցուցանիշների սանդղակի՝ հաշվետու ժամանակահատվածի համար ՋՕԸ-երի ինքնածախսածածկման տոկոսը պետք է կազմեր 42%, իսկ ըստ ՀՄՀ-Հայաստանի խորհրդատուի կողմից կատարված հաշվարկների, այն ներկայումս կազմում է 41.3%: Հաշվի առնելով, որ նախատեսված և փաստացի ցուցանիշների միջև շեղումը 10 տոկոսից քիչ է՝ տվյալ ցուցանիշը համարվում է բավարար:
Միաժամանակ կառավարման խորհրդի անդամներին տեղեկացվեց, որ 2010թ. բյուջեում ոռոգման համակարգերի պահպանության համար գումար նախատեսված չի եղել, և ՀՄԿ-ն տվյալ նախապայմանի համար տրամադրել է մեկ տարով հետաձգում, սակայն պայմանով, որ 2011թ. պետական բյուջեում ոռոգման համակարգերի պահպանության համար նախատեսված գումարը պետք է սահմանվի առնվազն 1,5 մլրդ ՀՀ դրամի չափով՝ այսինքն այնքան, որքան սահմանված է եղել 2009թ.:

Անդրադառնալով գնումների պլանին Արա Հովսեփյանը հայտնեց, որ գնումների պլանում ավելացել է նոր տող, որը նախատեսում է ծանր տեխնիկայի գնում ՋՕԸ-երի և Ջրառների համար: Այս գնումը հիմնված է լինելու ՀՄՀ-Հայաստանի խորհրդատուի կողմից իրականացված՝ ՋՕԸ-երի և Ջրառների կարիքների ուսումնասիրության վրա: Այս գնման մանրամասները արդեն իսկ քննարկվել են ՀՀ փոխվարչապետի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի հետ: Ներկայացվեց նաև, որ գնումների պլանում ավելացվել է նոր տող, որը նախատեսում է Ոռոգման ռազմավարության մշակման և համապատասխան իրավական ակտերի կամ ակտերում փոփոխությունների նախագծման համար խորհրդատվական ընկերության վարձում:

Կարեն Զադոյանը հարցրեց, թե որքա՞ն գումար է գնումների պլանով նախատեսված վարկային բաղադրիչի համար:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ վարկային բաղադրիչը ներառված չէ գնումների պլանում, քանի որ վերջինս չի հանդիսանում գնում: Մինչդեռ եկող եռամսյակում նախատեսվում է վարկային բաղադրիչի շրջանակներում տեղաբաշխել 2 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ Արա Հովսեփյանն արդեն իսկ նշել է ՋՕԸ-երի ինքնածախսածածկման բավականին բարձր տոկոսի և կատարման նախապայմանի բավարարման մասին, սակայն պետք է առանձնահատուկ արձանագրել, որ այս ցուցանիշը վերջին տարիների համար աննախադեպ է:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 15-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ոռոգման կառավարման կազմակերպությունների ինստիտուցիոնալ հզորացման խորհրդատուն ՀՄՀ-Հայաստանին առաջարկել է կազմակերպել այցելություն որևէ զարգացած երկիր՝ ՋՕԸ-երում առկա առաջադեմ փորձի ուսումնասիրության համար: Ներկայացվել է երկու առաջարկ, որոնցից ընտրվել է ԱՄՆ Կալիֆորնիա նահանգը: Այցի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել ՋՕԸ-երում առկա առաջադեմ փորձը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ինչու՞ է ընտրվել հենց Կալիֆորնիա նահանգը:

Վահրամ Ներսիսյանցը հայտնեց, որ ամենազարգացած ոռոգման համակարգերի կառավարումը և առաջադեմ ՋՕԸ-երն առկա են երկու վայրում, մեկը՝ Կալիֆորնիայում, մյուսը՝Մեքսիկայում:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ովքե՞ր են մեկնելու վերապատրաստման:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ վերապատրաստմանը մասնակցելու են ջրի կառավարմանն ինչպես անմիջական, այնպես էլ ոչ անմիջական առնչություն ունեցող մարմինների պաշտոնյաներ և ՋՕԸ-երի ներկայացուցիչներ: Մասնակիցների վերջնական ցանկը կհամաձայնեցվի ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՄԿ-ի հետ: Արա Հովսեփյանն ավելացրեց, որ այս վերապարտաստմանը մասնակցելու են բացառապես այն անձինք, որվքեր նախկինում չեն մասնակցել նմանատիպ վերապատրաստումների: ՀՄՀ-Հայաստանն առաջարկում է խորհրդատուին հատկացնել գումար տվյալ վերապատրաստումը

վերջինիս միջոցով կազմակերպելու համար, քանի որ այս պարագայում գործընթացն ավելի արագ և արդյունավետ կիրականացվի: Արա Հովսեփյանը նշեց նաև, որ այս այցը դրական ազդեցություն կունենա նաև ոռոգման ռազմավարության մշակման գործում, քանի որ այցի շրջանակներում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու առաջադեմ ՋՕԸ-երում գործող կառավարման համակարգին և ստանալու խնդրահարույց հարցերի պատասխանները, ինչպես օրինակ՝ ՋՕԸ-երի հարկազատման հարցն է:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ մի քանի վերապատրաստում տեղի է ունեցել Մեքսիկայում, որոնք բավականին արդյունավետ են եղել: Առաջադեմ փորձը շատ կարևոր է, ինչպես նաև կարևոր է այն, որ այդ վերապատրաստումներին մասնակցեն համապատասխան կառավարման մարմինների ներկայացուցիչները:

Վահրամ Ներսիսյանցն առաջարկեց իրականացնել վերապատրաստման կեսը Կալիֆորնիայում, իսկ մյուս կեսը՝ Մեքսիկայում: Այս տարբերակը համեմատական ուսումնասիրության հնարավորություն կտա և ավելի օգտակար կլինի: Վահրամ Ներսիսյանց առաջարկեց նաև որպես դասագիրք օգտագործել այս ոլորտին առնչվող իր կողմից հեղինակած գրքույկը, որը կարելի է գտնել նաև ինտերնետում:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շրջանակներում կնքված «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» պայմանագրի փոփոխության նախագիծը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստանի Խորհրդատուն ուսումնասիրել է բոլոր 44 ՋՕԸ-ներն ու 3 Ջրառներն և իրականացրել է այդ կազմակերպությունների կարիքների գնահատումը: Կարիքների գնահատման արդյունքում Խորհրդատուն առաջարկել է ջրի կառավարման մարմիններում (ՋՕԸ-ներում և ՋՄԳ-ներում) ներդնել աշխարհագրական տեղեկատվական համակարգ (ԱՏՀ-GIS): Նշված համակարգը կծառայի ՋՕԸ-ներում ու ՋՄԳ-ներում ջրի պահանջարկի պլանավորման, մոդելավորման, կառավարման և հաշվառման համար: Նախատեսվում է 22 ՋՕԸ-երում և 3 Ջրառներում ներդնել ԱՏՀ համակարգ, թարմացնել 20 ՋՕԸ-երում առկա ԱՏՀ համակարգերը, ինչպես նաև իրականացնել ՋՕԸ-երի և Ջրառների աշխատակիցների վերապատրաստում՝ ԱՏՀ համակարգի կիրառման համար:

Վիկտոր Ենգիբարյանը հարցրեց, թե որքա՞ն արժի ԱՏՀ համակարգը և վերապատրաստումը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ 22 ՋՕԸ-երում և 3 Ջրառներում ԱՏՀ համակարգի ներդնումը, 20 ՋՕԸ-երում առկա ԱՏՀ համակարգերի թարմացումը, վերապատրաստումը և պայմանագրում նախատեսված մնացած բոլոր աշխատանքների իրականացման ընդհանուր արժեքը կազմում է 103,664,000 ՀՀ դրամ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, որ մեկ աղբյուրից գնման պարագայում արդյո՞ք ՀՄՀ-Հայաստանը վստահ է, որ ներկայացված գինը ընդունելի է:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստանն իրականացրել է շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ ցանկացած պարագայում յուրաքանչյուր ընկերություն, որը նպատակ ունենա իրականացնելու տվյալ աշխատանքը, պետք է օգտվի տվյալ ընկերության տեղեկատվական բազայից: Ջրավան ՍՊԸ-ն նախկինում հավաքել է տեղեկատվական բազա 20 ՋՕԸ-երի համար, ինչպես նաև հեղինակն է այն համակարգչային ծրագրի, որի միջոցով կիրառվում է այս բազան:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ ջրային տնտեսության պետական կոմիտեին աջակցող թիմում աշխատող երկու երիտասարդ են մշակել այս ծրագիրը և դա իրականացրել են բացառապես սեփական նախաձեռնությամբ, առանց որևէ պետական պատվերի կամ դրամաշնորհի և գրանցել են այդ ծրագրի նկատմամբ իրենց հեղինակային իրավունքները: Ջրային տնտեսության պետական կոմիտեն որևէ կապ չունի այս ընկերության հետ: Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ համոզված է, որ այս ընկերության առաջարկը թափանցիկ է, չնայած որ կոմիտեն ՀՄՀ-Հայաստանին առաջարկել էր գնալ բաց մրցույթի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ելնելով գումարային, ժամկետային, ինչպես նաև ծրագրի իրականացման արդյունավետության նկատառումներից՝ ՀՄՀ-Հայաստանը, ստանալով ՀՄԿ-ի հավանությունը, առաջարկում է առաջնորդվել մեկ աղբյուրից գնման մեթոդով:

Վարդան Արամյանը հարցրեց, թե համակարգն ի՞նչ մոդելով է աշխատում և արդյո՞ք հնարավորություն է տալիս կատարել պահանջարկի պլանավորումներ:

Անդրանիկ Անդրեասյանը պատասխանեց, որ շատ հետաքրքիր մոդել է, պարզապես համակարգում ներդրվում են պարամետրերը և ինքն ավտոմատ հաշվարկներ է կատարում, օրինակ՝ որևէ քանակությամբ հեկտարի վրա տվյալ մշակաբույսի աճեցման համար որքան ոռոգման ջուր է անհրաժեշտ, մուտք է արված նաև յուրաքանչյուր ջրօգտագործողին առնչվող ամբողջ տեղեկատվությունը: Անդրանիկ Անդրեասյանն առաջարկեց անհրաժեշտության դեպքում ներկայացնել համակարգը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե հաշվի առնելով այն հանգամանքը, որ համակարգը ներդրվելու է նաև Ջրառներում, արդյո՞ք հնարավոր կլինի համակարգում որևէ փոփոխություն անել, որը հնարավորություն կտա պարզելու ջրի կորուստները, թե որտեղից որքան ջուր դուրս եկավ և որքան ջուր հասավ:

Անդրանիկ Անդրեասյանը պատասխանեց, որ ՋՕԸ-երի ինֆորմացիան ելքային է լինելու Ջրառների համար: Բովանդակային առումով ծրագիրն ամբողջ ինֆորմացիան կպարունակի, սակայն ջրի կորուստի կարգավորման համար պետք է իրավական մասով նաև ամրագրումներ կատարել:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի շրջանակներում ՋՕԸ-երի և ՋՄԳ-ների համար ԱՏՀ (GIS) ծրագրի գնման պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. սեպտեմբերի 8-ին ՀՄԿ-ն հաստատել է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից ֆինանսավորվող ծրագրերի փակման ուղեցույցը: Ուղեցույցի համաձայն ՀՄԿ ֆինանսավորմամբ իրականացվող յուրաքանչյուր ծրագրի ավարտից առնվազն 15 ամիս առաջ ծրագիրն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ՀՄԿ-ին ներկայացնել ծրագրի փակման պլան, իսկ ծրագրի ավարտից առնվազն 12 ամիս առաջ այդ պլանը պետք է հաստատված լինի ՀՄԿ-ի և կառավարման խորհրդի կողմից: Ուղեցույցում նաև ամրագրված են այն հիմնական կետերը, որոնք պետք է ներկայացված լինեն ծրագրի փակման պլանում, մասնավորապես՝ ծրագիրն իրականացնող կազմակերպության հետագա կարգավիճակը, վերջինիս գույքն այլ մարմինների փոխանցման հարցը, թերությունների վերացման ժամանակահատվածում գտնվող շինարարական պայմանագրերի փոխանցման խնդիրը և այլն: Արա Հովսեփյանն առաջարկեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի լիազոր ներկայացուցիչ, ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Ներսես Երիցյանի հետ համագործակցել նշված պլանի մշակման ուղղությամբ, որից հետո

փաստաթղթի վերջնական նախագիծը կներկայացվի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամների քննարկմանը և հաստատմանը:

Կարեն Զադոյանը նշեց, որ անհրաժեշտ է նաև խոսել վարկային միջոցների հետագա ճակատագրի մասին, քանի որ վերջիններս բանկերին և վարկային կազմակերպություններին են տրամադրված մինչև 2015թ.:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ դա այն հիմնական հարցերից մեկն է, որը պետք է արտացոլվի ծրագրի փակման պլանում:

Վարդան Արամյանը առաջարկեց, որպեսզի ծրագրի փակման պլանը քննարկվի նաև ՀՀ ֆինանսների նախարարության հետ, քանի որ վերջինս կարող է հանգեցնել բյուջետային պլանավորման հարցերի:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի փակման ուղեցույց և հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ծրագրի պլանի մշակման գործում համագործակցել ՀՀ էկոնոմիկայի նախարարի հետ:

Օրակարգի 5-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ պայմանագրի դեպքում նախատեսված աշխատանքները պետք է ավարտվեն 2011թ. հուլիսի 31-ին, այսինքն ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտից ավելի քիչ քան երկու ամիս առաջ: Այս կապակցությամբ ՀՄՀ-Հայաստանը լուրջ քննարկումներ է ունեցել ՀՄԿ-ի հետ կապված Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգման փաթեթ երկուսի իրականացման ժամկետների հետ, որի արդյունքում ՀՄՀ-Հայաստանին հանձնարավել է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդին տեղեկացնել, որ եթե 2011թ. սեպտեմբերի 29-ից հետո այս պայմանագրով նախատեսված աշխատանքների ավարտման համար որևէ գումար անհրաժեշտ լինի, ապա այդ ծախսերն իր վրա պետք է վերցնի ՀՀ կառավարությունը: Արա Հովսեփյանը հայտնեց նաև, որ քննարկումներ են տեղի ունեցել հաղթող ընկերության ներկայացուցիչների հետ, որի արդյունքում վերջիններիս կողմից ներկայացված ժամանակացույցի և հանդիպման արձանագրության համաձայն վերջիններս հավաստում են, որ կհասցնեն նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև պայմանագրի վերջը:

Հարցի ներկայացումից հետո **միաձայն որոշվեց** հաստատել «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնում (Փաթեթ II)» IA/CB/CW-08/010 պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 5-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ տվյալ պայմանագրով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նախատեսում է վարձել անհատ խորհրդատու, որը պետք է իրականացնի ՀՄՀ-Հայաստան ծրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում իրականացված աշխատանքների տեխնիկական աուդիտ:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե արդյո՞ք չկան տեղացի տեխնիկական աուդիտորներ:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ ՀՀ-ում առկա են լուրջ ինժիներներ, որոնք սակայն ամենայն հավանականությամբ չեն մասնակցել տվյալ մրցույթին:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ինչքա՞ն ժամանակ է աշխատելու տեխնիկական աուդիտորը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ պայմանագրի շրջանակներում նախատեսվում է մեկ ամիս տևողությամբ երեք այց ՀՀ, որից հետո նաև ժամանակ է նախատեսված յուրաքանչյուր այցի վերաբերյալ համապատասխան հաշվետվության պատրաստման և ներկայացման համար:

Անդրանիկ Անդրեասյանը նշեց, որ նաև կարևոր է, որպեսզի այդ հաշվետվությունները ներկայացվեն տեխնիկական վերահսկողին:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ դա միանշանակ կիրականացվի, ընդ որում ՀՄՀ-Հայաստանն արդեն իսկ նման փորձ ունի, երբ ճանապարհաշինության ծրագրի տեխնիկական աուդիտորի ներկայացրած հաշվետվությունները տրամադրվում էին նաև տեխնիկական վերահսկողին և վերջինիս ուշադրությունը հրավիրվում էր առկա բացթողումների և թերացումների վրա:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Ենթակառուցվածք բաղադրիչի տեխնիկական աուդիտոր» IAP/IC-08 ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 5-րդ հարցի գ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄԿ-ն արդեն իսկ պատրաստել է և ՀՄՀ-Հայաստանին կուղարկի համապատասխան իրականացման նամակ, որում ամրագրված է ՇԽ լուծարման, գործող կանոնակարգերի կասեցման, ՇԽ նոր ընտրություններ անցկացնելու և ընտրված ՇԽ կազմի պաշտոնավարման ժամկետը մինչև ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակումը երկարաձգելու փաստերը: Տվյալ իրականացման նամակը ենթակա է ստորագրման ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

ՀՀ Վարչապետը առաջարկեց չքննարկել այս հարցը, քանի որ վերջինիս վերաբերյալ արդեն իսկ առկա է որոշում, համաձայն որի, եթե քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները համաձայնության չեն գալիս, ապա իրականացվում է շահառուների խորհրդի նոր ընտրություն:

Վիկտոր Ենգիբարյանը նշեց, որ տեղեկանքում նշված է, որ ՇԽ ընտրության կարգը պետք է ներկայացվի ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Ներսես Երիցյանին, սակայն պարզ չէ, թե վերջինս ի՞նչ կապ ունի տվյալ գործընթացի հետ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ պարոն Ներսես Երիցյանը հանդիսանում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի՝ ՀՀ կառավարության կողմից նշանակված լիազոր ներկայացուցիչը և հենց այդ նկատառումներից ելնելով է կատարվել նշված առաջարկը:

Կարեն Զադոյանը խնդրեց ՀՀ Վարչապետին ապահովել, որպեսզի որևէ պետական կառավարչական մարմին չմիջամտի այս գործընթացին:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ այդ խնդրանքը կապահովվի:

Արման Ոսկանյանը հայտնեց, որ ինքը նախկինում արդեն իսկ ներկայացրել է այս հարցի վերաբերյալ իր կարծիքը, սակայն ևս մեկ անգամ ցանկանում է նշել, որ ինքը դեմ է նոր ընտրությունների իրականացմանը, քանի որ ստեղծում է նախադեպ նմանատիպ դեպքերի կրկնման համար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ քանի որ որոշումն արդեն իսկ կայացված է, ուստի պետք է հավատարիմ մնալ այդ որոշմանը և կազմակերպել նոր ընտրություններ:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ,
«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը